ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/3140-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1200-01.12.2025-ԳԿ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ» ձևակերպումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծով կատարվում են միայն լրացումներ, իսկ «ԼՐԱՑՈՒՄ» բառի փոխարեն լրացնել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը:

2. Առաջարկում ենք լրացնել նոր 1-ին հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 21-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ «5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը սույն օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է ստացել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կատարել է ուսումն

ավարտելուց հետո առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ոլորտում Հայաստանի Հանրապետությունում աշխատելու պայմանը:»:

Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել:

3. 1-ին (լրամշակված 2-րդ) հոդվածում՝

1) «առկա ուսուցման սովորելու» բառերից հետո հանել «և» շաղկապը, փոխարենը լրացնել «համար, ինչպես նաև» բառերը,

2) հաշվի առնելով նոր լրացվող 1-ին հոդվածի բովանդակությունը՝ առաջարկում ենք 2-րդ հոդվածի 2-րդ նախադասությունը հանել:

3. 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդվածի՝

1) վերնագիրը՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» հանել, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը,

2) 2-րդ մասում՝ «օրենքի 1-ին հոդվածով նախատեսված իրավական ակտն» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել «օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված հասկացությունները:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ